ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ դեկտեմբերի 2021 թվականի №___Ա
ք. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԵՎ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Երևան քաղաքի Ալեք Մանուկյան և Վարդանանց փողոցների խաչմերուկում տեղադրված գովազդային միջոցի սպառման համակարգն (այսուհետ՝ Սպառման համակարգ) էլեկտրական ցանցին միացնելու վերաբերյալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) ներկայացված՝ «Նուշիկյան ասոցիացիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորված անձ Դավիթ Գևորգյանի (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի հոկտեմբերի 25-ի դիմումը,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Դիմող անձի դիմումի հիման վրա՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) որ Երևանի քաղաքապետարանն իր 2021 թվականի հոկտեմբերի 21-ի №52/133699 գրությամբ չի առարկում Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացնելուն,

դ) Դիմող անձի 2021 թվականի նոյեմբերի 18-ի №1-196 և Ընկերության 2021 թվականի նոյեմբերի 23-ի №Ե-725-21 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացումը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ

հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ Կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի 2021 թվականի հոկտեմբերի 21-ի №52/133699 գրությունը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարելու վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
___ դեկտեմբերի 2021թ.